



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Գյուլտերի հայտեր

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

No 8 (73)

Սույն տեղեկագրում զետեղված տեղեկությունները համարվում են հրապարակված 2006 թվականի օգոստոսի 1-ից

Երեւան 2006

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների
նույնականացման միջազգային կոդերը
ըստ ՄՄՐԿ ST.9 ստանդարտի

- 21 Հայտի համարը
- 22 Հայտի ներկայացման թվականը
- 31 Առաջնային հայտի համարը
- 32 Առաջնային հայտի ներկայացման թվականը
- 33 Երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը
- 42 Հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը
- 51 Միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 Գյուտի անվանումը
- 57 Գյուտի ռեֆերատը
- 62 Ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ստացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 Հայտատուն, երկրի կոդը
- 72 Գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 74 Արտոնագրային հավատարմատարը
- 85 Միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86 Միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը
- 87 Միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը

Հրատարակվում է Ստավոր սեփականության
գործակալության կողմից 2000թ.

Издается Агентством интеллектуальной
собственности с 2000 г.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
Հեռ. 563-267 ընդհանուր բաժին
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական
ապահովման բաժին

0010, Երևан, Главный проспект, Дом Правительства 3
Тел. (374 10) 563-267 общий отдел
Тел. (374 10) 561-126 отдел информационно-
технологического обеспечения

E-mail: armpat@cornet.am

Տեղեկություններ համընդհանուր ծանոթացման դրված գյուտերի հայտերի մասին

(51) 2006

A01B 79/00

C09K 17/00

(21) P20060098 (22) 20.06.2006

(71) «ՀՀ ԳԱԱ Ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երևան, Արդուբայան փող. 2-րդ նրբ. 10 (AM)

(72) Ռիմա Վարազդատի Մանուկյան (AM), Մանուշակ Ալբերտի Ապրեսյան (AM), Արա Մերուժանի Արսենյան (AM)

(54) Հողի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը:

Հողի մշակումն իրականացնում են 1-5%-անոց հիդրոմեկուսիչ բաղադրանյութով, որը ներառում է, զանգվ. % բազմաէթիլհիդրոսիլօքսան՝ 1,0-5,0, ժելատին՝ 0,05-0,1, լցանյութ՝ 0,1-0,15 և ջուր՝ մնացածը: Հողը և հիդրոմեկուսիչ բաղադրանյութը վերցնում են 3:1 հարաբերակցությամբ:

Եղանակը ապահովում է ոռոգման ջրի խնայություն և բերքատվության բարձրացում:

(51) 2006

A22C 17/00

(21) P20060081 (22) 12.05.2006

(71) Հակոբ Բարսեղյան, Գյումրի, Արագած 6, 2-րդ շենք, բն. 11 (AM), Աննա Հարությունյան, Գյումրի, Վահան Չերազի 19, բն. 36 (AM)

(72) Հակոբ Բարսեղյան (AM), Աննա Հարությունյան (AM)

(54) Ճարպակտրիչ մեքենա

(57) Գյուտը վերաբերում է մսամթերքի մշակմանը, մասնավորապես, երշիկների արտադրության մեջ ճարպի կտրման մեքենաներին:

Մեքենան ունի գետեղարան, սայլակ, փոխուղղահայաց հարթություններում տեղակայված երկայնական և լայնական բազմասկավառակային դանակային բլոկներ, հորիզոնական

պտտվող սկավառակային դանակ և սայլակի հետադարձ-առաջընթաց տեղափոխման մեխանիզմ, որն ունի դրա երկու կողմերում տեղակայված միմյանց զուգահեռ ընթացքային պտուտակներ և երկու ուղղորդիչներ: Սայլակը երկու զույգ գլորման հենարաններով տեղակայված է ուղղորդիչների ակունքներում և զույգ մանեկների միջոցով կինեմատիկորեն կապված է ընթացքային պտուտակների հետ, որոնք կինեմատիկորեն կապված են տանող լիսեռին:

Ապահովվում է բազմասկավառակային դանակների բլոկների նկատմամբ սայլակի գծային տեղափոխման ճշտությունը, 2 նկ.:

(51) 2006

A43B 13/38

(21) P20060113 (22) 17.07.2006

(71) Աննա Կարեգինի Սինոպյան, Գյումրի, Իսահակյան 8, բն. 52 (AM), Արուսյակ Հովհաննեսի Մանուկյան, Գյումրի, Լազոյի 47 (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան, Գյումրի, Սեյան 47, բն. 5 (AM)

(72) Աննա Կարեգինի Սինոպյան (AM), Արուսյակ Հովհաննեսի Մանուկյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(54) Միջատակ

(57) Գյուտը վերաբերում է կոշիկի արտադրությանը, մասնավորապես՝ ներբանների միջատակերին, և կարող է օգտագործվել միջին և բարձր կրունկներով կոշիկների ներքնամասերի պատրաստման համար:

Միջատակն ունի վերհակիչային շերտ, որն ունի կրունկից մինչև նախագարշապարի մատնահատվածի հողավորման տեղամասը ձգվող ելուստ: Ելուստի բարձրությունը չի գերազանցում միջատակի հաստությունը, իսկ երկարությունը՝ կրունկից միջև հելենոկային մասը:

Բարձրացվում է միջատակի կայունության աստիճանը, 2 նկ.:

(51) 2006

A61K 36/00

(21) P20060054 (22) 07.04.2006

(71) Արամայիս Աղաջանյան, Երեւան, Գայի 4, բն. 86 (AM), Անի Չախարյան, Երեւան, Գարեգին Նժդեհի 2, բն. 27 (AM)

(72) Արամայիս Աղաջանյան (AM), Անի Չախարյան (AM)

(54) Շագանակագեղձի բորբոքման հետեւանքով առաջացած իմպոտենցիայի բուժման պատրաստուկ ըստ Աղաջանյանի

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական պատրաստուկներին եւ կարող է օգտագործվել շագանակագեղձի բորբոքման հետեւանքով առաջացած իմպոտենցիայի բուժման համար: Պատրաստուկը ներառում է սովորական ընկույզի եւ անտառային տխիլի պտուղներ, արեւածաղկի սերմեր, մեղր, սեխի սերմեր եւ էթիլային սպիրտ բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (գանգվ.%)՝ սովորական ընկույզի պտուղներ՝ 5,02, անտառային տխիլի պտուղներ՝ 2,51, արեւածաղկի սերմեր՝ 1,50, մեղր՝ 2,51, սեխի սերմեր՝ 1,50, էթիլային սպիրտ՝ 86,96:

Կրճատվում է բուժման տեւողութունը:

(51) 2006

A61K 36/00

(21) P20060055 (22) 07.04.2006

(71) Արամայիս Աղաջանյան, Երեւան, Գայի 4, բն.86 (AM), Հասմիկ Կարապետյան, Կոտայքի մարզ, Չարենցավան 4-րդ թաղամաս, բն.5 (AM)

(72) Արամայիս Աղաջանյան (AM), Հասմիկ Կարապետյան (AM)

(54) Հակաոսկրափշային պատրաստուկ «Շպորիտ» ըստ Աղաջանյանի

(57) Գյուտը վերաբերում է դեղագործական պատրաստուկներին եւ կարող է օգտագործվել ոսկրափշային հիվանդությունների բուժման համար:

Պատրաստուկը ներառում է անուշադրի սպիրտ, քափուր, էթիլային սպիրտ, գետասպունգ եւ տաքդեղ սովորականի պտուղները բաղադրամասերի հետեւյալ հարաբերակցությամբ (գանգվ.%)՝ անուշադրի սպիրտ՝ 1,15, քափուր՝ 1,15, էթիլային սպիրտ՝ 96,0, գետասպունգ՝ 0,55, տաքդեղ սովորականի պտուղներ՝ 1,15:

Կրճատվում է բուժման տեւողութունը:

(51) 2006

B21D 11/00

B26D 3/16

(21) P20060104 (22) 30.06.2006

(71) Կարեն Վոլոդյայի Գասպարյան, Երեւան, Լեւի-սիուսի 10ա, բն. 18 (AM), Պատվական Ռուբենի Հախիսյան, Երեւան, Մ. Մելիքյան 13, բն. 23 (AM)

(72) Կարեն Վոլոդյայի Գասպարյան (AM), Պատվական Ռուբենի Հախիսյան (AM)

(54) Ամրանների ծռման եւ կտրման սարք

(57) Գյուտը վերաբերում է փականագործական ձեռքի սարքերին եւ կարող է կիրառվել մինչեւ 19 մմ տրամագծի շինարարական ամրանների ծռման եւ կտրման համար:

Սարքն ունի հորիզոնական հենարանային եւ ուղղաձիգ մոնտաժային սալերից կազմված իրան եւ նրա վրա տեղակայված ծռման, կտրման եւ դարձկեն դանակի արագ առբերման հանգույցներ եւ շարժաբեր լծակի հետ դրանց կապի միջոցներ:

Ծռման հանգույցը ներառում է ծռող մատներ եւ հենակային տարր ունեցող ուժային սալ, իսկ շարժաբեր լծակի հետ կապի միջոցն իրականացված է կառչման մեջ գտնվող երկու ատամնավոր սեկտորների տեսքով, որոնցից մեկը կոշտ ամրակցված է շարժաբեր լծակին, իսկ մյուսը՝ ուժային սալին:

Կտրման հանգույցը ներառում է անշարժ եւ դարձկեն դանակներ, իսկ շարժաբեր լծակի հետ կապի միջոցն իրականացված է կառչման մեջ գտնվող երկու ատամնավոր սեկտորների տեսքով, որոնցից մեկը կոշտ ամրակցված է դարձկեն դանակին, իսկ մյուսը՝ արգելանվին: Արգելանիվն ունի սեւեռիչ շնիկ եւ կապված է շարժաբեր լծակի հետ ուժային շնիկի եւ արագ առբերման շարժաթելի միջոցով:

Մեծացվում է զարգացվող ուժը, բարելավվում է սարքի երգոնոմիական ցուցանիշները, 10 նկ.:

(51) 2006

C01F 7/06

C01B 33/26

(21) P20060096 (22) 15.06.2006

(71) Սերոբ Նշանի Ենգիբարյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն. 44 (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան, Երեւան, Գայի պող. 53, բն. 3 (AM)

(72) Սերոբ Նշանի Ենզիբարյան (AM), Գոհար Աշոտի Սուխուդյան (AM)

(54) Պեռլիտի հարստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սիլիկատների քիմիային, մասնավորապես՝ արգևահողի ցածրորակ հումքատեսակների քիմիական հարստացման եղանակներին եւ կարող է օգտագործվել արգևահողի խտանյութի՝ նատրիումի եւ կալիումի հիդրոպլումասիլիկատների, ինչպես նաեւ նատրիումի եւ կալիումի մետասիլիկատների եւ հեղուկ ապակիների ստացման համար:

Եղանակը կայանում է նրանում, որ 0.7-1.2 ի 10^{-3} մ չափերի պեռլիտը հորանային ուղղածիգ վառարանում փքման միջոցով ակտիվացնում են, որից հետո մթնոլորտային ճմշման տակ 30-50 րոպե մշակում են նատրիումի օքսիդի 200 գ/լ կոնցենտրացիայի կաուստիկ հիմքի լուծույթով 109-112°C ջերմաստիճանում հեղուկ եւ պինդ ֆազաների 5:1 զանգվածային հարաբերության պայմաններում:

Պարզեցվում է հարստացման եղանակը, բարձրացվում սիլիցիումի օքսիդի կորզման աստիճանը:

(51) 2006

C04B 26/00

(21) P20060093 (22) 12.06.2006

(71) Սերգեյ Չարմիկի Ժամհարյան, Երեւան, Հայաստան 35, բն. 34 (AM)

(72) Սերգեյ Չարմիկի Ժամհարյան (AM), Արամ Սերգեյի Ժամհարյան (AM)

(54) Սառը վերամշակված ասֆալտաբետոն

(57) Գյուտը վերաբերում է ճանապարհների շինարարությանը, մասնավորապես՝ ասֆալտաբետոնի կրկնակի օգտագործման միջոցով ասֆալտաբետոնե բաղադրանյութերի ստացմանը:

Սառը վերամշակված ասֆալտաբետոնը ներառում է, զանգվ. % ասֆալտաբետոնի թափոններ՝ 94-97, բիտում՝ 1-2, հանքային փոշի՝ 0,4-0,8, ջուր՝ 0,6-1,2:

Ապահովվում է բարձր ֆիզիկամեխանիկական հատկություններ ունեցող ասֆալտաբետոնի ստացումը:

(51) 2006

C07C 53/00

C07C 51/00

(21) P20060114 (22) 17.07.2006

(71) Ռուզան Բաբկենի Բայաթյան, Երեւան, Դավթաշենի 4-րդ փող. 29, բն. 17 (AM)

(72) Ռուզան Բաբկենի Բայաթյան (AM), Բաբկեն Էլիզումի Բայաթյան (AM), Լիդա Արշակի Սահակյան (AM)

(54) Օմեգա - բրոմ կարբոնաթթուների ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է օրգանական քիմիայի բնագավառին, մասնավորապես՝ $\text{Br}(\text{CH}_2)_n - \text{COOH}$, որտեղ՝ $n = 4, 6, 8$ ընդհանուր բանաձեւի ω -բրոմկարբոնաթթուների ստացման եղանակներին եւ կարող է կիրառվել դեղամիջոցների, հերբիցիդների, միջատասպանների, ֆունգիցիդների ստացման համար:

Համապատասխան α , α , α , ω -քառաքլորածխաջրածինները բրոմացնում են նատրիումի բրոմիդով երկմեթիլֆորմամիդի միջավայրում 60-100°C ջերմաստիճանում, անջատում են բրոմածանցյալը եւ ենթարկում ծծմբաթթվական հիդրոլիզի:

Պարզեցվում է եղանակը, բարձրանում արգասիքի ելքը:

(51) 2006

C08G 85/00

(21) P20060101 (22) 22.06.2006

(71) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն. 2 (AM)

(72) Ռուբեն Հովհաննեսի Չալտիկյան (AM), Ափոյան Սվետլանա Հակոբի

(54) Զլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմերի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերների քիմիային, մասնավորապես՝ ջլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմերի ստացման եղանակներին եւ կարող է օգտագործվել սոսինձների ստացման համար:

Պոլիջլորոպրենային «Նաիրիտ Դ» կաուչուկը եւ օգտագործված ծամոնների մնացորդները 10: (2-5) հարաբերակցությամբ տրվում են մինչեւ 40-50°C տաքացրած գրտնակահաս-

տոցի վրա եւ երեք-չորս անգամ գրտնակումից հետո ստանում են կայուն կառուցվածքի քլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմեր:

Ապահովվում է բլոկ պատվաստված համապոլիմերների ստացումը պարզ եղանակով:

(51) 2006

C09D 1/00

(21) P20060103 (22) 27.06.2006

(71) Վլադիմիր Նիկոլայի Օվչիյան, Երեւան, Սունդուկյան 28ա, բն.35 (AM), Մելիզա Ֆրունզեի Կոստանոյան, Երեւան, Վահր. Փափազյան 16ա, բն.66 (AM), Յուլակ Ռուբենի Ստեփանյան, Երեւան, Կոմիտասի պող., 2-րդ նրբ. բն.15 (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան, Երեւան, Մելքունովի 39, բն. 1 (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան, Երեւան, Գրիբոյեդովի 5ա, բն.33 (AM)

(72) Վլադիմիր Նիկոլայի Օվչիյան (AM), Մելիզա Ֆրունզեի Կոստանոյան (AM), Յուլակ Ռուբենի Ստեփանյան (AM), Աիդա Եղիազարի Գրիգորյան (AM), Էմմա Բալաբեկի Յովհաննիսյան (AM)

(54) Սիլիկատային օրգանական ներկ

(57) Գյուտը վերաբերում է պատվածքների բաղադրություններին, մասնավորապես՝ օրգանական նյութերով բարեփոխված բարձրամոդուլ հեղուկ ապակու հիմքով սիլիկատային օրգանական ներկերին, որոնք կարող են կիրառվել մետաղները կոռոզիայից պաշտպանելու համար:

Ներկը ներառում է (զանգվ.%) հեղուկ ապակի՝ 50-60, բարեփոխիչ՝ 8-10, գունանյութի եւ լցանյութի խառնուրդ՝ 30-40: Բարեփոխիչը իրենից ներկայացնում է 2,0:4,0:1,0:2,5:2,0 զանգվ. հարաբերակցությամբ վերցված էթիլոլ լաքի, բենեկնախեժի, ֆուրֆուրոլի, վուշի յուղի եւ միզանյութի խառնուրդ:

Բարձրանում են ներկի հիման վրա ստացված պատվածքների ֆիզիկամեխանիկական եւ պաշտպանիչ հատկությունները:

(51) 2006

C09D 1/00

(21) P20060107 (22) 11.07.2006

(71) «ՄԵՏՏԱ ԳՐՈՒՊ» ՍՊԸ, Երեւան, Արղության 10 (AM)

(72) Սերգեյ Յայրապետյան (AM), Անատոլի Բայրամյան (AM), Վլադիմիր Գասպարյան (AM)

(54) Սիլիկատային ներկ

(57) Գյուտը վերաբերում է պատվածքների բաղադրություններին, մասնավորապես՝ բարձրամոդուլ հեղուկ ապակու հիմքով սիլիկատային ներկերին, որոնք կարող են կիրառվել մետաղյա, փայտե եւ այլ մակերեսայինները պատելու համար:

Ներկը ներառում է (զանգվ.%) կալիումական կամ նատրիումական հեղուկ ապակի՝ 60.0-75.0, լցանյութ՝ 20.0-30.0, գունանյութ՝ 3.0-8.0, ընդ որում, լցանյութը դիատոմիտ է:

Բարելավվում են ներկի ֆիզիկամեխանիկական եւ պաշտպանիչ հատկությունները:

(51) 2006

C09J 4/00

(21) P20060100 (22) 22.06.2006

(71) Ռուբեն Յովհաննեսի Չալտիկյան, Երեւան, Կոմիտասի 36, բն.2 (AM), Սվետլանա Յակոբի Ավոյան, Երեւան, Կոմիտասի 36, բն.2

(72) Ռուբեն Յովհաննեսի Չալտիկյան (AM), Սվետլանա Յակոբի Ավոյան

(54) Սոսնձային բաղադրություն

(57) Գյուտը վերաբերում է պոլիմերների քիմիային եւ կարող է օգտագործվել արհեստական ու բնական կաշիներ, ինչպես նաեւ փայտ, մետաղ, պլաստմասսաներ սոսնձելու համար:

Բաղադրանյութը ներառում է հետեւյալ բաղադրամասերը, զանգվ.%. քլորոպրենի եւ վինիլացետատի բլոկ պատվաստված համապոլիմեր՝ 11,7-12,2, 1,5 դիամինոկապրոնաթթու՝ 0,1-0,2, ցինկի օքսիդ՝ 2,1-2,3, իդենկոլմարոնային խեժ՝ 4.8-5.3, քլորնաիրիտ՝ 2.7- 2.9, բենզին «Գալոշա»՝ 36,0-38.5, Էթիլացետատ՝ 36,0- 38.5:

Բարձրացվում է բաղադրանյութի քիմիական կայունությունը եւ սոսնձող հատկությունները:

(51) 2006

C12N 1/20

(21) P20060082 (22) 18.05.2006

(71) «Յայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, Երեւան, Տերյան 74 (AM)

(72) Սուրեն Լեւոնի Գրիգորյան (AM), Մարտին Յակոբի Յովհաննիսյան (AM), Մարիամ Արմենակի Սարգսյան (AM)

(54) Մանրէների աճեցման համար սնուցիչ միջավայրի պատրաստման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է սնուցիչ միջավայրի պատրաստման եղանակներին եւ կարող է օգտագործվել մանրէաբանության տարբեր ոլորտներում:

Համաձայն եղանակի, 3-35-օրական ճագարների մկանային հյուսվածքներից, սրտից, թոքերից, լյարդից, փայծաղից, ավշահանգույցներից, երիկամներից, մակերիկամներից, արյունից, ենթաստամոքսային գեղձից, ուղեղից, լեզվից, մաշկից, ոսկրային հյուսվածքներից եւ լեղվանյութից պատրաստում են խյուս: Խյուսը նոսրացնում են ջրով 1:10 հարաբերակցությամբ, հասուևացնում 6-16 ժամվա ընթացքում սենյակային ջերմաստիճանում եւ զտում: Ստացված սնուցիչ միջավայրի pH հասցնում են 7.2 արժեքի:

Բարձրացվում է մանրէների աճի ինտենսիվությունը:

(51) 2006

C12P 13/10

(21) P20060074 (22) 02.05.2006

(71) «Կենսատեխնոլոգիայի ԳՀԻ» ՓԲԸ, Երեւան, Գյուլբջյան 14 (AM)

(72) Ծովինար Ռաֆիկի Բալաբեկյան (AM), Ֆլորա Նուբարի Տիրունի (AM), Անդրանիկ Յակոբի Վարդանյան (AM), Արմեն Եղիշի Աղաջանյան (AM), Յուրի Իվանի Ավագյան (AM), Աշոտ Սերոբի Սադյան (AM)

(54) L - օրնիթինի միահիդրոքլորիդի ստացման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է մանրէաբանական արդյունաբերությանը, մասնավորապես՝ ամինաթթուների ստացման եղանակներին:

L-օրնիթին արտադրող *Corynebacterium glutamicum* ΓA-8 (BKՈՄ B-4240) մանրէների շտամը աճեցնում են շաքարավազ, սպիտակուցավիտամինային հիդրոլիզատ, անօրգանական աղեր ու ջուր ներառող սննդամիջավայրում: Կենսասինթեզի սկզբնական փուլում կուլտուրայի աճը իրականացնում են pH 7.6-

7.8 արժեքներում, իսկ հետագա փուլում՝ pH 7.2-7.4 արժեքներում եւ ազոտով ու շաքարով աստիճանական լրասնուցմամբ: Կուլտուրալ հեղուկից L-օրնիթինը անջատում են սորբումով: Սորբումը կատարում են NH₄⁺-ձեւի KY-2-8 սուլֆոկատիոնիտով, ընդ որում հավասարակշռային լուծույթը ունի pH 3.0-3.5 արժեքը, իսկ արգասիքի դետորբումն իրականացնում են 3.5-4.0% ամոնիակի ջրային լուծույթով:

Ապահովվում է նպատակային արգասիքի ելքի բարձրացում եւ ուղեկցող ամինաթթուների գումարային ելքի նվազեցում:

(51) 2006

C23C 12/00

(21) P20060122 (22) 24.07.2006

(71) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին - Բերդի 3, բն. 6 (AM)

(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային նյութը յուղազրկում են, ընկղմում ռենիումի աղի փոշու մեջ, տաքացնում ջրածնի միջավայրում 1100-1150°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 1,5-3 ժամ, հովացնում, չորացնում 90-95°C ջերմաստիճանում եւ ենթարկում թրծաթողման 350-400°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) 2006

C23C 12/00

(21) P20060121 (22) 24.07.2006

(71) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին - Բերդի 3/6 (AM), Գուրգեն Սարգիսյանի Յովսեփյան, Երեւան, Թոթովենցի 1/1, բն.35 (AM)

(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM), Գուրգեն Սարգիսյանի Յովսեփյան (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալ-

վածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային նյութը յուղագրկում են, ընկղմում ռենիումի օքսիդի փոշու մեջ, տաքացնում մթնոլորտի միջավայրում 500 - 600°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 1 - 3 ժամ, հովացնում եւ չորացնում 200 - 250°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) 2006

C23C 12/00

(21) P20060120 (22) 24.07.2006

(71) Կարեն Գուրգենի Կարապետյան, Երեւան, Արին - Բերդի 3, բն. 6 (AM)

(72) Կարեն Գուրգենի Կարապետյան (AM)

(54) Կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակ

(57) Գյուտը վերաբերում է կարծրահամահալվածքային գործիքանյութերի մշակման եղանակներին:

Կարծրահամահալվածքային նյութը յուղագրկում են, ընկղմում ռենիումի աղի 20 - 22% - անոց լուծույթի մեջ, չորացնում 70 - 80°C ջերմաստիճանում, տաքացնում ջրածնի միջավայրում 1100 - 1150°C ջերմաստիճանում, այդ ջերմաստիճանում պահում 2 - 5 ժամ, հովացնում, ապա չորացնում 90 - 100°C ջերմաստիճանում եւ ենթարկում թրծաթողման 300 - 350°C ջերմաստիճանում:

Բարձրացվում է գործիքանյութերի մաշակայունությունը:

(51) 2006

F03G 7/00

(21) P20050209 (22) 22.11.2005

(71) Ջանիկ Մամիկոնի Ճավրշյան, Երեւան, Բաղյան 1, բն.25 (AM), Վահագն Ջանիկի Մամիկոնյան, Երեւան, Բաղյան 1, բն.25 (AM)

(72) Ջանիկ Ճավրշյան Մամիկոնի (AM), Վահագն Ջանիկի Մամիկոնյան (AM)

(54) Էլեկտրաէներգիայի ստացման եղանակ եւ արեւահողմային գրավիտացիոն կայանք դրա իրագործման համար

(57) Գյուտը վերաբերում է էներգետիկայի բնագավառին: Կայանքը կարելի է օգտագործել անբարենպաստ բնակլիմայական պայմաններ ունեցող վայրերի էլեկտրաֆիկացման համար:

Էլեկտրաէներգիայի ստացման համար մանրահատիկ սորուն ավազը կամ ստորգետնյա ջուրն արեգակնային եւ քամու էներգաների կիրառմամբ տեղափոխում են բարձրության վրա տեղադրված մեծածավալ տարողությունների մեջ: Այնուհետեւ ավազը կամ ստորգետնյա ջուրն աստիճանաբար ինքնահոս ձեւով լցվում է պտտվող փոկի անոթների մեջ, որոնց գումարային ուժն առաջացնում է էլեկտրագեներատորի լիսեռի պտույտ՝ ստացվում է էլեկտրաէներգիա, 2 անկախ կետ, 2 նկ.:

(51) 2006

F41B 15/00

(21) P20060064 (22) 21.04.2006

(71) Միքայել Խաչիկի Ղուկասյան, Երեւան, Համբարձումյան 47, բն. 22 (AM)

(72) Միքայել Խաչիկի Ղուկասյան (AM)

(54) Էլեկտրահարող սարք «Գյուրգա»

(57) Գյուտը վերաբերում է խոցելու էլեկտրական միջոցներ ունեցող զենքին:

Սարքն ունի հանովի կափարիչով իրան եւ իրանի մեջ տեղակայված սնուցման ինքնավար աղբյուր, հպակային մեկուսատախտակ եւ բարձրավոլտ կերպափոխիչի բլոկ, որը կատարված է մուտքային շղթայի հպակներ, ձեռքի շարժաբեր կոճակ եւ սրված էլեկտրոդներ ունեցող շարժական մոդուլի տեսքով: Շարժական մոդուլն ունի իրանի մեջ երկայնական ուղղությամբ տեղաշարժի հնարավորություն: Հպակային մեկուսատախտակը երկկողմանի է, մեկ կողմով այն հպարկվում է սնուցման աղբյուրի հետ, իսկ մյուս կողմով, սահող հպակների միջոցով՝ շարժական մոդուլի հետ, որի հետ մեկուսատախտակը կապված է ճկուն տարրի միջոցով: Էլեկտրոդներն ամրակցված են շարժական մոդուլի ճակատային մասում, իսկ իրանի ճակատային պատին կան էլեկտրոդների ելքի անցքեր: Սնուցող լարումը մատուցվում է բարձրավոլտ կերպափոխիչին միայն էլեկտրոդների դուրս ցցված դիրքում:

Բարձրացվում են սարքի քողարկվածությունը եւ կիրառողի անվտանգությունը, 7 նկ.:

(51) 2006

G01J 4/00

(21) P20060077 (22) 06.05.2006

(71) Աշոտ Գեորգյան, Երեւան, Մարշալ Բաղրամյան 58, բն.18 (AM), Արմեն Սեդրակյան, Երեւան, Մոլդովական 27, բն. 612 (AM), Աշոտ Խաչատրյան, Երեւան, Մայրան 4, բն.12 (AM)

(72) Աշոտ Գեորգյան (AM), Արմեն Սեդրակյան (AM), Աշոտ Խաչատրյան (AM)

(54) Էլեկտրամագնիսական ալիքի բեւեռացման հարթության պտույտի ուժեղացման եղանակ եւ այդ եղանակը իրականացնող սարք

(57) Էլեկտրամագնիսական ալիքի բեւեռացման հարթության պտույտի ուժեղացման նպատակով այն անցկացնում են ռեզոնանսային միջավայրի վերջավոր հաստություն ունեցող շերտով՝ ռեզոնանսային ատոմներով հարստացված թիթեղի միջով: Թիթեղի հաստության եւ ալիքի ելքային ինտենսիվության հարաբերակցությունը որոշում են առաջարկված բանաձեւից: Էլեկտրամագնիսական ալիքի բեւեռացման հարթության պտույտի ուժեղացման սարքն ունի օպտիկական առանցքի վրա հաջորդաբար տեղադրված լույսի աղբյուր, բեւեռացուցիչ, հետազոտվող նմուշ, ռեզոնանսային ատոմներով հարստացված թիթեղ, վերլուծիչ եւ գրանցող սարք:

Ընդլայնվում են էլեկտրամագնիսական ալիքի բեւեռացման հարթության թույլ պտույտների չափման սահմանները, 2 անկախ կետ, 1 նկ.:

(51) 2006

G21C 17/00

(21) P20060076 (22) 04.05.2006

(71) «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ, Արմավիրի մարզ, Մեծամոր (AM)

(72) Պետրոս Յովհաննիսյան (AM), Ռադիկ Գասպարյան (AM)

(54) Ճնշման տակ տարողությունից ճառագայթաակտիվ նյութի հոսաթողման տեղադրության եւ մեծության որոշման եղանակ եւ դրա իրականացման սարք

(57) Գյուտը վերաբերում է միջուկային տեխնիկայի բնագավառին:

Ճնշման տակ գտնվող տարողության հոսաթողման առաջացման տեսակետից ամենավտանգավոր հատվածամասերը կիպ գոտեւորված են տուփերով: Յուրաքանչյուր տուփ ունի գազ-կրիչի մուտքի եւ ելքի ականոցներ: Մուտքի ականոցի միջով եւ վերահսկվող հատվածամասի ամբողջ մակերեսությամբ շրջափակված անցած շոգեգազային խառնուրդը բաց էլեկտրամագնիսական կափույրների միջով, գազային պոմպի օգնությամբ կոլեկտորով ուղղում են չափիչ տարողության մեջ, որտեղ հենանիշային նուկլիդի ծավալային ակտիվության չափիչի օգնությամբ ստուգում են առկա է արդյոք շոգեգազային խառնուրդի մեջ հենանիշային նուկլիդը, թե ոչ: Հենանիշային նուկլիդի հայտնաբերման դեպքում բոլոր կափույրները փակում են, ապա հաջորդաբար բացում են ճառագայթաակտիվ շոգեգազային խառնուրդը կոլեկտորով ուղղում են չափիչ տարողության մեջ: Հոսաթողման մեծությունը հաշվարկում են չափիչ տեղեկատվական բլոկերում հենանիշային նուկլիդի ծավալային ակտիվության չափված մեծությունով, իսկ կառավարվող կափույրների տրված տոպոլոգիայով որոշում են հոսաթողման տեղադրությունը:

Բարձրացվում են հոսաթողման տեղադրության որոշման ճշգրտությունը եւ հոսաթողման հայտնաբերման զգայունությունը, 2 անկախ կետ, 1 նկ. :